

Ո՞Վ Է ԻՐԱԿԱՆ ՀԻՍՈՒՍԸ

«Հիսուսն էլ նրան պատասխանեց. Բոլոր պատվիրաններից առաջինը սա է՝ Լսի՛ր, Իսրայել՛, մեր Տեր Աստված մե կ Տեր է:» Մարկոս 12:29

Քո գաղափարը որոշում է քո արժեքները, և քո արժեքները որոշում են քո գործերը.

1. Հիսուսը՝ իբրև տիեզերքի Տերը

«Քրիստոսն աներևույթ Աստծու պատկերն է՝ բոլոր ստեղծվածներից առաջ ծնված, որովհետև նրանով ամեն բան ստեղծվեց՝ ինչ որ երկնքում է ու ինչ որ երկրի վրա...բոլոր բաները նրա միջոցով ու նրա համար ստեղծվեցին:» Կողոսացիս 1:15-17

❖ Ի՞նչ պետք է անել. Նրան պաշտիր խոնարհությամբ և երկյուղով

«Ով Տեր, լսել եմ քո լուրը և վախեցել, ով Տեր, վերանորոգիր քո գործը տարիների մեջ, տարիների մեջ իմացրու, և բարկության մեջ ողորմություն հիշիր:» Ամբակում 3:2

«Ուստի անշարժ թագավորություն ընդունած լինելով՝ պինդ բռնենք այն շնորհը, որով հաճությամբ պիտի ծառայենք Աստծուն, ահով ու երկյուղածությամբ: Որովհետև մեր Աստվածը ոչնչացնող կրակ է:» Եբրայեցիս 12:28-29

2. Հիսուսը՝ իբրև պարողը

«Հզորը՝ Տեր Աստված, քո մեջ է և կը փրկի քեզ, ուրախություն կը բերի քեզ, կը նորոգի քեզ իր սիրով և ուրախ կը լինի քո մեջ զվարճությամբ, ինչպես տոնի օրը:» Սովոնիա 3:17

❖ Ի՞նչ պետք է անել. Ուրախացիր որ նրա համար հաճելի ես

«Երբոր տեսնում եմ քո երկինքը, քո մատների գործը՝ լուսինն ու աստղերը, որ դու հաստատեցիր, ինչ է մարդը որ դու հիշում ես նրան, և մարդի որդին, որ դու խնամք ես տանում նրա համար:» Սաղմոս 8:3-4

3. Հիսուսը՝ իբրև փեսան

«Խնդանք և ուրախ լինենք ու փառք տանք նրան, որ Գառան հարսանիքը եկավ, և նրա կինը պատրաստեց իրեն:» Հայտնություն 19:7

❖ Ի՞նչ պետք է անել. Պատրաստվել հարսանիքի համար

«Արդ դուք էլ պատրա՛ստ եղեք, որովհետև Մարդու Որդին այն ժամին կգա, որ չեք կարծում:» Ղուկաս 12:40